

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԵՐ  
ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐ  
ԱՐՅԱԽՈՒՄ**

**1-2, 2014**



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽՈՒՄ

## ОБРАЗОВАНИЕ И НАУКА В АРЦАХЕ

ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ 2014, 1-2

ЯНВАРЬ-ИЮНЬ 2014, 1-2

Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական  
սովորողների և ուսուցիչների համար

Հիմնադիր՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն

Научно-методический и научно-популярный журнал для учащихся и учителей

Учредитель: министерство образования и науки НКР

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### СОДЕРЖАНИЕ

#### ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ

Գլխավոր խմբագիր՝  
Ռ. Մարտիրոսյան  
Պատասխանատու  
խմբագիր՝

Վ. Աթայան

Խմբագրի տեղակալ՝

Մ. Մինասյան

Պատասխանատու

բարտառդար՝

Ս. Մայիլյան

Խմբագրական կոլեգիա՝

Աբրահամյան Ա.

Աբրահամյան Հ.

Ասրյան Ս.

Աղալովյան Լ.

Աղուզումյան Ռ.

Ապրեսյան Մ.

Բարսեղյանյան Ա.

Բարսեղյան Վ.

Բարդասարյան Գ.

Գրիգորյան Հ.

Գրիգորյան Ս.

Չոլյան Ս.

Ջիլֆուղարյան Մ.

Թավադյան Լ.

Խաչիյան Է.

Խաչատրյան Մ.

Խաչատրյան Վ.

Կիրակոսյան Ա.

Կարապետյան Վ.

Հովհաննիսյան Ա.

Հայրապետյան Ս.

Ղազարյան Է.

Ղազինյան Գ.

Ղուկասյան Ա.

Մաղալյան Վ.

Մանասյան Ա.

Մանուչարյան Հ.

Մելքունյան Ս.

Մովսիսյան Ա.

Ներսիսյան Լ.

Ներսիսյան Ա.

Շեկյան Լ.

Պետրոսյան Լ.

Պետրոսյան Լ.Ն.

Սարգսյան Հ.

Սաղյան Ա.

Միմոնյան Ա.

Մովսիսյան Յու.

Տեր-Մինասյան Ա.

Քանալյան Օ.

Արցախի բնի լուսավորիչ մանկավարժների և հոգևոր-մշակութային գործիչների գործունեությունը XIX դարի առաջին կեսին  
*Ս. Ավանեսյան, Գ. Հարությունյան*.....4-15

Деятельность педагогов-просветителей и духовно-культурных деятелей Арцахской епархии в первой половине XIX века  
*А. Аванесян, Г. Арутюнян*

Ուսուցչի մասնագիտական ինքնազարգացման սոցիալ-մանկավարժական և մեթոդաբանական հարցեր *Գ. Հակոբյան*.....16-20  
Социально-педагогические и методологические вопросы профессионального саморазвития учителя *Г. Акопян*

Մանկավարժական գիտահետազոտական մեթոդների դերը բարձրորակ պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման գործում *Թ. Հարությունյան*.....21-25  
Роль педагогических научно-исследовательских методов в деле подготовки высококачественных профессиональных специалистов *Т. Арутюнян*

Հանրակրթական համակարգում հոգեբանական անվտանգության ապահովման բաղկացուցիչները *Մ. Միքայելյան, Է. Չափարյան*.....26-34  
Составляющие обеспечения психологической безопасности в общеобразовательной системе *М. Микаелян, Э. Закарян*

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կառավարման համակարգն ու ոլորտի առանցքային փոփոխությունները *Ա. Աբրահամյան*.....35-39  
Система управления высшего образования в Республике Армения и кардинальные изменения в этой сфере *А. Абрамян*

Որոշ մանկավարժական նկատառումներ կանտիլենայի կատարման վերաբերյալ *Հ. Բալայրյան*.....40-44  
Некоторые педагогические соображения относительно исполнения кантилены *А. Истриян*

Պլենարային պրակտիկան՝ որպես ուսումնական գործընթաց *Ս. Սարգսյան*.....45-48  
Пленэрная практика как учебный процесс *С. Саргсян*

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ  
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ**

Հոսանքի աղբյուրի աշխատանքը <i>Ս. Մայիլյան</i> .....	49-53
Работа источника тока <i>С. Маилян</i>	
Ավագ դպրոցի ֆիզիկայի դասընթացում ատոմական մոդելների դիտարկման մի քանի հարցերի մասին <i>Լ. Պետրոսյան</i> .....	54-64
О некоторых вопросах рассмотрения атомных моделей в курсе физики старшей школы <i>Л. Петросян</i>	
«Աշխարհագրություն» առարկայի դասավանդման դերը հանրակրթության համակարգում <i>Վ. Գրիգորյան</i> .....	65-70
Роль преподавания географии в системе общего образования <i>В. Григорян</i>	
Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական տարբերություններ <i>Յու. Ավետիսյան</i> .....	71-78
Фонетические, лексические и грамматические различия западноармянского и восточноармянского языков <i>Ю. Аветисян</i>	
Հեղինակային նորարարությունները Ա. Բլոկի բանաստեղծությունների հայերեն թարգմանություններում <i>Գ. Հակոբյան</i> .....	79-85
Авторские неологизмы в армянских переводах стихотворений Александра Блока <i>Г. Акопян</i>	
Լ. Քերոլի հեքիաթները որպես բնագիտական ճանաչողության ուսուցման միջոց <i>Ն. Աղամյան</i> .....	86-89
Сказки Л. Керролла как метод обучения естественно-научному мышлению <i>Н. Адамян</i>	
Բացատրական ընթերցանության բաղադրամասերի միջոցով կրտսեր դպրոցականների գրական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացի ուսումնասիրման արդյունքների վերլուծություն <i>Վ. Միմոնյան</i> .....	90-95
Анализ исследования процесса приобретения элементарных литературных знаний младшеклассниками посредством составляющих объяснительного чтения <i>В. Симонян</i>	

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОЕ**

Միլիցիումի օքսիհիդրատների ռեոլոգիական և էլեկտրակինետիկական հատկությունները փոփոխական մագնիսական դաշտերում <i>Ա. Ստեփանյան, Օ. Քամայան</i> .....	96-100
Реологические и электрокинетические свойства оксигидратов кремния в переменном магнитном поле <i>А. Степанян, О. Камалян</i>	
ՀՀ ցեոլիթակիր տուֆերի և մագնեզիալ-սիլիկատային ապարների հավելումների ազդեցությունը պորտլանդ ցեմենտի հատկությունների վրա <i>Շ. Խաչատրյան</i> .....	101-104
Влияние добавок цеолитового туфа и магнезиально-силикатных пород на свойства портланд цемента <i>Ш. Хачатрян</i>	
ԼՂՀ Կաշենի պղնձի հանքավայրի երկրաբանական-կառուցվածքային առանձնահատկությունները և հանքայնացման տեղայնացման օրինաչափությունները <i>Ա. Մուխսի-Հովեյան</i> .....	105-108
Геолого - структурные особенности и закономерности локализации оруденения Кашенского медного месторождения НКР <i>А. Мухси-Овезян</i>	
Оценка методических ошибок при изучении аномалии “Векового хода” в пределах Араратского сейсмополигона (АСП) <i>Ա. Байрамян, Լ. Ахвердян</i> .....	109-113
Մեթոդական սխալների գնահատումը Արարատյան սեյսմափորձադաշտի (ՍՍՓ) տարածքում «Գարավոր քայլի» անոմալիայի ուսումնասիրման ժամանակ <i>Ա. Բայրամյան, Լ. Հախվերդյան</i>	
Բնական աղետների վտանգավորության վերլուծությունը, գնահատումը և քարտեզագրումը <i>Ա. Հովհաննիսյան</i> .....	114-118
Анализ, оценка и картографирование опасности природных бедствий в РА <i>А. Оганисян</i>	
Использование географо-геологических информационных систем для выявления особенностей локализации оруденения в Шнох-Кохбском рудном узле <i>А. Мовсисян</i> .....	119-125
Աշխարհաերկրաբանական տեղեկատվական համակարգերի կիրառումը Շնող-Կողբի հանքային հանգույցում հանքայնացման տեղայնացման առանձնահատկությունների բացահայտման համար <i>Հ. Մովսիսյան</i>	

Հողաբուսական ծածկույթի դերը ԼՂՀ գետային հոսքի ձևավորման գործում <i>Տ. Սաֆարյան</i> .....	126-131
Роль почвенно-растительного покрова в формировании речного стока НКР <i>Т. Сафарян</i>	
Զբոսաշրջության դերը աշխատատեղերի ստեղծման գործում (Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան նահանգի օրինակով) <i>Հասեհին Էբրահիմի Քիասարի</i> .....	132-137
Роль туризма в дела создания рабочих мест (На примере штата Тегеран, Исламская Республика Иран) <i>Хоссейн Ебрахим Киасари</i>	
Սոցիալական կապիտալի ազգային և քաղաքակրթական ներուճակությունները <i>Ս. Սարգսյան</i> .....	138-144
Национальная и цивилизационная способности социального капитала <i>А. Сардарян</i>	
Որոտանի ավազանի էքստրեմալ ելքերի փոփոխությունների դինամիկան <i>Զ. Ստրադյան</i> .....	145-150
Динамика изменений экстремальных стоков в бассейне реки Воротан <i>З. Мурадян</i>	
Օբ օսոբեննոստյա օչերկա Մարիэтты Шагинян "Нагорный Карабах" <i>Լ. Փարամազյան</i> .....	151-154
Մարիետա Շահինյանի «Լեռնային Ղարաբաղ» ակնարկի առանձնահատկությունների մասին <i>Լ. Ֆարամազյան</i>	
Պետրոս Շանշյանի բարենորոգչական գործունեությունը <i>Ս. Հարությունյան</i> .....	155-161
Реформаторская деятельность Петроса Шаншьяна <i>М. Арутюнян</i>	
Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ազգապահպան գործունեությունը 1988-1994թթ. Հայաստանում <i>Լ. Հարապետյան</i> .....	162-168
Патриотическая деятельность Католикоса всех армян Вазгена Первого в 1988-1994 гг. в Армении <i>Л. Айрапетян</i>	
Փոխառությունները և օտարաբանությունները Գեղամ Սարյանի պոեմներում և բալլադներում <i>Լ. Պապիկյան</i> .....	169-175
Займствования и варваризмы в поэмах и балладах Гегамы Сарьяна <i>Л. Патакян</i>	

**ԱՐՎԵՍՏԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ  
 ВЫДАЮЩИЕСЯ ДЕЯТЕЛИ ИСКУССТВА**

Հայ երգարվեստի հպարտություն. Գոհար Գասպարյան <i>Ս. Քոչարյան</i> .....	176-179
Гордость армянского вокального искусства. Гоар Гаспарян <i>М. Кочарян</i>	

ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇՅԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(համառոտ ակնարկ)

Մ. Հարությունյան



19-րդ դարի 40-80-ական թվականներին հայկական մշակույթի ինքնության արժեքների պահպանման ու զարգացման գործում արժևորվում է անվանի մանկավարժ և հասարակական խոշոր գործիչ Պետրոս Շանշյանի դերը: Հարկ է նշել, որ պատմական արժեքավոր աղբյուրները շատ քիչ են անրադարձել հայտնի մանկավարժի մշակութային գործունեությանը: Սույն ուսումնասիրությունում առկա փաստերի հիման վրա փորձել ենք լուսաբանել որոշ դրվագներ Պ. Շանշյանի կյանքից ու մշակութային գործունեությունից:

Պետրոս Սամուելի Շանշյանը ծնվել է Թիֆլիսում՝ ազնվական ընտանիքում (1819թ., օգոստոսի 13-ին)<sup>1</sup>: Շանշյանների ազնվական տոհմի պատմությունը կապված է դեռևս նախորդ դարերի պատմական իրադարձությունների հետ: Այսպես, Շանշյանները համարվել են Վրաստանի նշանավոր ազնվական ընտանիքներից մեկը և Վրաց իշխանության ժամանակ նրանց հովանավորության տակ էր գտնվում տերության գանձապետության պաշտոնը: Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում, այդ պաշտոնը նույնպես հանձնվեց Շանշյաններին: Այդ տոհմի ներկայացուցիչներից հայտնի է Սաամ Գիվիչը, ով ամենայն հավատարմությամբ Թիֆլիսի գանձապետության պաշտոնը վարեց երկար տարիներ: Վրաստանի կուսակալ գեներալ Երմոլովը մեծ հավատ և վստահություն ուներ վերջինիս նկատմամբ և շատ հարգում էր նրան:

Սաամի (Սամուելի) մահից հետո ռուսական կառավարությունն առաջարկում է նրա անդրանիկ որդուն՝ Նիկողայոսին, ստանձնել այդ պաշտոնը: Սակայն, վերջինս լինելով զինվորական, մերժում է: Իսկ կրտսեր որդին՝ Պետրոսը, այդ ժամանակ ընդամենը վեց տարեկան էր: Այդպես էլ դադարում է Շանշյան տոհմական գանձապետության արտոնությունը<sup>2</sup>:

Պետրոս Շանշյանը սկզբնական կրթությունը ստացել է Ներսիսյան դպրոցում (Հարություն Ալամդարյանի ժամանակ), ապա՝ տեղի գիմնազիայում: 1833թ. Շանշյանը մեկնում է Մոսկվա, ավարտում Լազարյան ճեմարանը, այնուհետև 1837թ. ընդունվում Մոսկվայի համալսարանի բժշկական<sup>3</sup>, ապա՝ լեզվագրական ֆակուլտետները: Այդտեղից նա տեղափոխվում է Պետերբուրգ և 1843թ. ավարտում համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Ռուսման մեջ կատարելագործվելու նպատակով Շանշյանը 1843թ մեկնում է Եվրոպա, լինում Վիեննայում, Վենետիկում, Նեապոլում, Հռոմում և Փարիզում: Փարիզում 1848թ. հեղափոխության ժամանակ նա մասնակցում է հեղափոխական ակումբների ժողովներին<sup>4</sup>:

1849թ. տեսական ու գործնական հարուստ գիտելիքներով Պետրոս Շանշյանը վերադառնում է Թիֆլիս և Ներսես Ե Աշտարակեցի (իսկական անունը՝ Թորոս Հարությունի Շահազիզյան) կաթողիկոսի միջնորդությամբ նշանակվում Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնում, որտեղ մնում է ընդամենը երկու ամիս<sup>5</sup>:

<sup>1</sup> Մելքիսեդեկ եպս. Մուրատեան, Պետրոս Շանշեանց, Կենսագրութիւն, Թիֆլիս, 1898, էջ 7:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 7-9:

<sup>3</sup> Խնդիրն այն է, որ ուսումնառության տարիներին որոշ խնդիրներ են առաջացել բժշկական բաժնում:

<sup>4</sup> Հայ մշակույթի օրրանը, Եր., 1971, էջ 262-263:

<sup>5</sup> Տարածայնություններ են առաջացել Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների և Շանշյանի միջև: Խնդիրն այն էր, որ դպրոցի ուսումնական մասի ամբողջ ղեկավարությունը կենտրոնացված էր հոգաբարձուների ձեռքում: Շանշյանը Ներսես կաթողիկոսին առաջարկեց, որ ուսումնական մասի ղեկավարությունը հանձնվի տեսչի տնօրինությանը, սակայն վերջինիս առաջարկը մերժվեց կաթողիկոսի կողմից: Շանշյանը անմիջապես հեռացավ Ներսիսյան դպրոցից:

1851թ. վերջերին հոգաբարձուների և Ներսես կաթողիկոսի խնդրանքով Շանշյանը Պետերբուրգից կրկին հրավիրվում է Թիֆլիս՝ տեսչական պաշտոնը դեկավարելու:

Թիֆլիսի դպրոցի տեսչության տարիներին (1851-1857թթ.) մեծ մանկավարժն իր լուսամիտ հայացքներով, դպրոցական-ուսումնական գործի խոր իմացությամբ, աշակերտության նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքով կարճ ժամանակահատվածում կարողանում է գրավել դպրոցի հոգաբարձական և մանկավարժական կոլեկտիվի սերն ու հարգանքը: Այդ հռչակավոր դպրոցում Շանշյանը ծավալում է **կազմակերպչական մեծ աշխատանք**.



1. **Կազմում է դպրոցական աշխատանքների վերափոխման մի ընդարձակ ծրագիր**, որտեղ նշում է հայոց դպրոցներում դաստիարակության գործընթացում մինչ այդ եղած բազմաթիվ թերությունները՝ դաստիարակության կազմակերպման սխալ գործընթացը, ուսուցման առարկաների թերի մշակվածությունը, դասավանդման մեթոդների սխալ ուղղվածությունը և այլն:

2. **Արգելում է աշակերտներին պատժելու բոլոր խիստ միջոցները**՝ ապտակելը, քանոնով ձեռքին հարվածելը, աշակերտի մագերից քաշելը, անձին բարոյապես վիրավորելը և այլն<sup>6</sup>:

3. **Ֆիզիկական պատիժը փոխարինվում է մտքի խելացի, բարոյական ներգործմամբ**, աշակերտի անձի նկատմամբ ուշադիր ու քաղցր վերաբերմունքով:

4. **Փոփոխություն է մտցնում ուսումնական գործընթացում**. հայոց հոգևոր դպրոցներում առարկաների դասավանդումը ռուսերեն լեզվից փոխարինվում է մայրենի լեզվով: Միայն ռուսաց լեզուն, ռուսաց պատմությունը ու Ռուսաստանի աշխարհագրությունն է մնում ռուսերենով:

Ներսիսյան դպրոցում Շանշյանի ծավալած մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատել անվանի վիպասան Պերճ Պռոշյանը, որը սովորել էր Ներսիսյան դպրոցում և մոտիկից ճանաչում էր նրան: Շանշյանի տեսուչ և ուսուցիչ նշանակվելը Պռոշյանը համարում է դպրոցի կյանքում վերածննդի շրջան: Ներսիսյան դպրոցի պատմության մեջ Շանշյանի տեսչության ժամանակը կոչվեց «Շանշյանի դար» անունով<sup>7</sup>:

Պ. Շանշյանի **բարենորոգչական ծրագրերը** մասամբ իրագործվեցին, քանի որ տարածայնություններ էին առաջացել տեսչի և Վրաստանի թեմի նորանշանակ առաջնորդի՝ Սարգիս արքեպ. Ջալալյանցի միջև<sup>8</sup>: Այդ տառաձայնությունների խորացման պատճառով 1857թ. անվանի մանկավարժը թողնում է դպրոցը և մեկնում Պետերբուրգ<sup>9</sup>:

1863թ. Արցախի Հախումյան գերդաստանի ներկայացուցիչների՝ Համբարձում աղա Հախումյանի, Հարություն Շխեյանի գրավոր խնդրանքով և Մատթևոս կաթողիկոսի առաջարկով առաջավոր գաղափարներով տոգորված Շանշյանը հրավիրվում է Արցախ: Կաթողիկոսի հատուկ կոնդակով նույն թվականին նշանակվում է Շուշիի թեմական դպրոցի տեսուչ:

Արխիվային փաստաթղթում նշված է՝ կաթողիկոսի կոնդակով Ստեփանոս արքեպիսկոպոսի կողմից թեմական դպրոցի տեսչի պաշտոնը Շանշյանին հաճնելու արարողությունները. «Եւ մեր մեծաւ ուրախութեամբ ընկալեալ զՀայրապետական վեհ հրաման, որ հայի ի բարեկարգութիւն ուսումնարանին և ի յառաջադիմութիւն բարոք կառավարութեան ուսումնական եւ տնտեսական մասանց նորին կարգեմ ի տեսուչ գնորին ազնութիւն զամենահաւատարիմ որդի մեծին Հայաստանեայց յայն սակս, զի հոգ կալցի յանձին բարեկարգել զուսումնարանն ըստ արտաքին և ներքին գրութեան ազգասիրական և հոգեկան բարեջանութեամբ իւրով ի պսակել

<sup>6</sup> Մելքիսեդեկ եպս. Մուրատեան, նշվ. աշխ., էջ 29:

<sup>7</sup> Մանրամասն տես՝ Պ. Պռոշյան, Հուշեր, Եր., 1940:

<sup>8</sup> Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանին վերագրվող մի հոդվածի մասին, ԳԱԱ տեղեկագիր, 1954, թ. 11 (79), էջ 79-82:

<sup>9</sup> Հայ մշակույթի օրրանը, էջ 264:

գտորք և զԱստուածահաճոյ ակնկալութիւն նոցա յուսումն կրօնական և բարոյական կրթութեան»<sup>10</sup>:

Պ. Շանշյանը, նշանակվելով թեմական դպրոցի տեսչի պաշտոնում (1863-1864թթ.)<sup>11</sup>, իրեն օգնական է վերցնում Պերճ Պողոսյանին: Վերջինս այնտեղ դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն և ազգային պատմություն: Նրանց ջանքերով Շուշիի թեմական դպրոցի կրթական համակարգը բավականին բարելավվում է<sup>12</sup>:

Շանշյանի տեսչության տարիներին թեմական դպրոցը, ի պատիվ 5-րդ դարի պատմիչ Եղիշեի, անվանվեց «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց»:

1. Շանշյանը նախ ձեռնամուխ եղավ *դպրոցի մանկավարժական անձնակազմի վերափոխման իրականացմանը*: Անձամբ կազմելով ուսուցչական կոլեկտիվի ցուցակը՝ հանձնեց հոգաբարձության վերաստուգմանը: Վերակազմված ցուցակի մեջ ընդգրկված էին ուսուցիչներ հին սերնդից՝ Գալուստ վարդապետ Փափագյան, Ներսես Աթաբեկյան, Գրիգոր Տեր-Հակոբյան, Բարսեղ քահանա Տեր-Մովսիսյան, Նահիրման-բեկ Փիրումյան, Հակոբ Իշխանյան, Սարգիս Տեր-Ղազարյան և նոր սերնդից՝ Պերճ Պողոսյանց, Աղաթոն Սմբատյանց, Աշեքսանդր Մանուչարյանց, Գրիգոր Դովլաթյանց և այլք<sup>13</sup>:

2. *Կատարվեցին ուսումնական ծրագրերի, աշակերտների թվի, դպրոցի տարեկան եկամուտների և այլ փոփոխություններ*: Դպրոցը դառնալ եռդասյա՝ իր երկու ծխական դպրոցներով: Սկզբում դպրոցն ունեցել էր մոտ 20 աշակերտ<sup>14</sup>, իսկ 60-ական թվականների սկզբներին՝ 245<sup>15</sup>:

Եկամուտների պատկերը հետևյալն էր. եթե 1841-1847թթ. Շուշիի թեմական դպրոցի ընդհանուր եկամուտների հաշիվը կազմում էր 3970 ռուբլի<sup>16</sup>, ապա Շանշյանի տեսչության ժամանակ համեմատաբար աճեց թեմական դպրոցի եկամուտը՝ կազմելով 5116 ռուբլի<sup>17</sup>:

Պ. Շանշյանի բարենորոգչական ծրագրերից կարևորագույնը ուղղված էր *կանանց կրթության բարելավմանն ու դպրոցաշինարարական բարեգործական աշխատանքների իրականացմանը*: Այսպես, նա, արժևորելով կանանց կրթությունը, ակտիվ մասնակցություն է ունենում *իգական դպրոցներ հիմնելու գործընթացին*: 1864թ. հուլիսին նա մի խումբ գործիչների՝ Գարեգին Մելիքսեթ Մուրադյանի, Պ. Պողոսյանի և այլոց օժանդակությամբ բացում է Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցը<sup>18</sup>: Այս իգական դպրոցի կազմակերպմանը ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը: Դպրոցը պահպանվել է մինչև 1920թ. և հայ օրիորդների կրթության գործում խաղացել է իր զգալի դերը:

Շանշյանի և Պողոսյանի կազմած օրիորդաց դպրոցի կանոնադրության մեջ նշված է.

«Դպրոցի նպատակն է՝ պատրաստել լուսավորյալ վարժապետուհի և լուսավորյալ մայրեր»<sup>19</sup>: Ուսուցումը տարվում էր հայերենով: Ուսումնական ծրագրերի մեջ ընդգրկված էին կրոնի պատմություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, ձեռագործություն, վայել-

<sup>10</sup> Գործ Հոգ., 1863, N 26:

<sup>11</sup> Ռ. Տեր Գասպարյան, նշվ. աշխ., էջ 106:

<sup>12</sup> 1836թ «Պողոթենիե»-ի, համաձայն 1838 հունիսի 22-ին բացվում է Շուշիի (ներկայումս՝ Շուշի) հայոց հոգևոր թեմական դպրոցը:

<sup>13</sup> Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի(1838-1913թթ.), Թիֆլիս, 1914, էջ 288:

<sup>14</sup> Գ.Հ. Հարությունյան, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Մտեփ., 2000, էջ 39:

<sup>15</sup> Լեո, Լեո, նշվ., աշխ. էջ 288:

<sup>16</sup> Մատենադարան, կաթ. դիվան. ք. 116, վավ. 863:

<sup>17</sup> Գ.Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 32: Նաև՝ Հաշիվ Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Շուշի, 1890:

<sup>18</sup> Մանրամասն տես՝ Պ. Պողոսյան, Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացումը, Շուշի, 1864:

<sup>19</sup> Լեո, նշվ., աշխ., էջ 293:

չագրություն, նկարչություն, ռուսաց լեզու, թվաբանություն և այլ առարկաներ: ՌՒՍՈՒԳԻՉՆԵՐԻ մեծ մասը այնտեղ աշխատում էր առանց աշխատավարձի: Այս մասին ուշագրավ նշումներ է կատարել Պ. Շանշյանը. «Իմ տեսչության տարիներին ճանաչված ու հարգված շատ ուսուցիչներ դասաւանդում էին ձրի. այսպես, Հեջուբեանը ձրի դասաւանդում էր Պատմութիւն ռուսաց, Պատկանեանը և Չմշկեանը՝ Ռուսերեն լեզու, Ա. Բամելիքեանը՝ Թուրքաւանութիւն, Յարութիւն վարժապետը՝ Հայերէն լեզու, Ս. Սահառունին՝ Կրօնագիտութիւն, Ղազարը՝ Երաժշտութիւն.....»<sup>20</sup>:



Այս մասին փաստում է նաև Մելիքսեդէկ եպս. Մուրատեանը, որն ուսումնարանի աշխատակազմի ու աշակերտների մասին նշում է. «ՌՒՍՈՒԳՉԱԿԱՆ խումբը ամենայն սիրով հանձն է առել առանց աշխատավարձի աշխատել Օրիորդաց Ուսումնարանում: Աշակերտները երգեր էին երգում, իսկ մեկն էլ կարդում է մի երկար ճառ կանանց դաստիարակության մասին: Այդ ճառի հեղինակն էր Պ. Շանշյանը»<sup>21</sup>:

Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացման կապակցությամբ Պ. Պռոշյանը նշում է. «1864 թուի ապրիլի եօթն է, ամենքս անհամբեր սրտով սպասում էինք, ամենքիս սրտերը բնդում էր խնդութիւնից, քանի որ այդ օրը մօտենում էր, երևակայում էինք այդ օրը այն երջանկութեան սկիզբը, որ պետք է ունենար Ղարաբաղու հայ կանանց սեռն, երևակայում էինք այն ապագայն, որ այդ օրովը երջանկանալու էր Ղարաբաղու հայերին համար և ահա՛ հասաւ այդ օրը՝ հայ ազգի համար վսեմ օրը: Թող ամեն հայ տիկիներ և պարոններ մտնեն իրենց սրտի խորքն և մի խորհրդակցութիւն անեն իրենց մտաց հետ, իրենց հոգւոց հետ այդ մեր ցանկալի և համբերութեամբ սպասած օրուան համար, թող խորհրդակցեն և տեսնեն թէ կանանց սեռի կրթութիւնից ի՞նչ մեծ երջանկութիւն է կախուած ազգի համար»<sup>22</sup>:

Այս իզական դպրոցի բացմանը և գործունեությանը ակտիվ մասնակցություն է ունեցել շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի կինը՝ Մարիամ Հախումյանը: Նա նվիրել էր նաև հինգ սենյակից բաղկացած բնակարան: Հարկ է նշել, որ նախքան օրիորդաց դպրոցի հիմնելը, Մարիամ Հախումյանը իր տանը աղջիկների հետ կանոնավոր դասընթացներ էր անցկացնում:

Մեկ այլ կարևոր փաստում նշվում է. «Օրիորդաց ուսումնարանի բացվելու կապացությամբ փոխարքա Մեծ իշխան Սիխայել Նիկոլակիչի կինը՝ Մեծ իշխանուհի Օլգա Ֆեոդորովնան, շնորհակալություն է հայտնել տիկ. Մարիամ Հախումյանին՝ օրիորդաց դպրոցի հոգաբարձությունը հանձն առնելու ու նրա մասին հոգ տանելու համար»<sup>23</sup>:

19-րդ դարի 60-ական թվականների սկզբներից Պ. Շանշյանի բարենորոգչական ծրագրերը արտացոլվել էին նաև *Արցախի հրատարակչության բնագավառում*:

1828թ. Բազելի քարոզչական ընկերության կողմից հիմնադրված Շուշիի տպարանը, որն անցել էր Արցախի (Ղարաբաղի) թեմական առաջնորդի և կոնսիստորիայի իրավասությանը, Բաղդասար միտրոպոլիտի կյանքի վերջին տարիներին դադարեցրել էր իր աշխատանքը: Վերջինիս մահվանից հետո (1854թ.) տպարանը մնաց միայն կոնսիստորիայի հսկողության տակ և կոչվեց «Տպարան Սրբոյ Էջմիածնի»:

Պ. Շանշյանը, տպագրական գործին նոր շունչ հաղորդելու համար, քայլեր է ձեռնարկել տպարանը Շուշիի թեմական դպրոցի հովանավորության տակ վերցնելու ուղղությամբ:

<sup>20</sup> Մելիքսեդէկ եպս. Մուրատեան, նշվ. աշխ., էջ 29:

<sup>21</sup> Մելիքսեդէկ եպս. Մուրատեան, նշվ. աշխ., էջ 102 -110:

<sup>22</sup> Մանրամասն տե՛ս Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հատ 7, Եր., 1964: Նաև՝ Պ. Պռոշյան, Հուշեր, Եր., 1940:

<sup>23</sup> «Մեղու Հայաստանի», 1864, թ. 46: ՌՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ կան «Մեղու Հայաստանի» պարբերականի հետևյալ համարներում՝ 1865 թ. 17, 41:

Թեմական դպրոցի հոգաբարձու Համբարձում բեկ Սարուխանբեկյանը դիմում է Հովհաննես Հովնանյանին<sup>24</sup> և խնդրում, որ նա 1858-ից իր նուիրած տպարանը հատկացնեք Թեմական դպրոցին: 1864թ. Հովնանյանի միջնորդությամբ տպարանը վերցվեց Կոնստանդնուպոլսի վերահսկողությունից և հանձնվեց հոգաբարձության իրավասությանը<sup>25</sup>:

Պ. Շանշյանի և նրա խմբի ջանքերով կարճ ժամանակահատվածում Շուշիում տպագրական գործը վերելք ապրեց:

19-րդ դարի 60-70-ական թվականներին Շուշիի թեմական դպրոցի տպարանում տպագրվող գրքերի բնույթը նկատելիորեն փոխվում է: Լուսավորության, գրականության և հայագիտության զարգացմանը համընթաց մեծ շափերի է հասնում պատմագիտական, բանասիրական, տեղագրական, լեզվագիտական, գեղարվեստական գործերի և զանազան դասագրքերի, քարտեզների ու բառարանների հրատարակությունը, ընդլայնվում է նաև թարգմանական գրականության տպագրությունը: Աստիճանաբար կատարելագործվում է տպագրության տեխնիկան: Հոգևոր հայրերի տպարանը շարունակում է հրատարակ հանել նոր հրատարակություններ: Այստեղ լույս է ընծայվում գիտության մագիստրոս Կ. Եզյանցի «Ներքին կեանք Հին Հայաստանի պատմաբանական քննություն» նշանավոր աշխատությունը, որը ռուսերենից աշխարհաբար թարգմանել էր (1864թ.) Շուշիի օրիորդաց դպրոցի ուսուցիչ Պերճ Պռոշյանը: Այնուհետև լույս է տեսնում Պետրոս Շանշյանի հեղինակությամբ, Պռոշյանի խմբագրությամբ կազմած «Լարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը» աշխատությունը (1864թ.), որ մեծ ջերմությամբ նկարագրվում են հայ կանանց կրթության խնդրին առնչվող մի շարք առաջադիմական հարցեր:

Հարկ է նշել, որ Շանշյանը որպես հայ եկեղեցու պատմության քաջահմուտ գիտակ, ազգի ինքնուրույն գոյությունն ու առաջադիմությունը տեսնում է առաքելական եկեղեցու կրոնական ազատության և անկախության մեջ: Նա իր կրոնական գաղափարները շարադրել է «Համառօտութիւն քրիստոնէական ուսման Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցոյ» (Երուսաղեմ, 1879թ.) աշխատության մեջ: Այս գիրքը բաղկացած է երեք գլուխներից՝ «Կրօնի վերայ առհասարակ», «Հաւատոյ վերայ առհասարակ», «Աղօթքի վերայ առհասարակ»<sup>26</sup>: Շանշյանը իր Կրոնական սուր հայացքներն ամփոփել է նաև «ՌԻսումն պարտուց» գրքում, որտեղ ուշագրավ են հատկապես, «Յառաջաբան պատգամաց առաջին երկու պատուիրանք»<sup>27</sup>, «Ընդհանուր պարտավորութիւնք առ մարդիկ»<sup>28</sup> գլուխները: «ՌԻսումն պարտուց» կրոնական աշխատությունը տպվել է երկու անգամ: Առաջին անգամ նախ Կ. Պոլսում՝ 1870թ, այն ժամանակվա պատրիարք Խրիմյանի թույլտվությամբ և ջերմ հանձնարարականով, իսկ երկրորդ անգամ նրանց տպագրողն ու հրատարակողն եղել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանը (1874թ.): Շանշյանը հեղինակել է նաև «Համքյար», Եղիշեի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունները, նրա խմբագրությամբ՝ «Կանոնագրություն» և այլ աշխատություններ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

<sup>24</sup> Բանն այն է, որ 1854թ. Շուշիի տպարանը դադարեցրել էր իր տպագրական աշխատանքները: Այդ ժամանակ Վեհապետյանը հաշվի առնելով տպարանի պակաս անհրաժեշտ պարագաները, դիմել էր Մոսկվայում ապրող հարուստ և հայտնի բարեգործություններ անող Հովհաննես Հովնանյանին և խնդրել, որ մեկ նոր ձեռքի մամուլ և հայերեն տառեր նվիրի տպարանին: Հովնանյանը անմիջապես իրագործեց այդ խնդրանքը: Փոքր ինչ հարստացած տպարանը սկսեց նորից աշխատել:

<sup>25</sup> Գործ Հոգաբ. 1864, ք. 22:

<sup>26</sup> Պ. Շանշյան, Համառօտութիւն քրիստոնէական ուսման Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցոյ, Երուսաղեմ, 1879, էջ 5, 33, 154:

<sup>27</sup> Պ. Շանշյան, ՌԻսումն պարտուց, Կ. Պոլիս, 1870, էջ 9:

<sup>28</sup> Պ. Շանշյան, նույն տեղում, էջ 41:



Պ. Շանշյանի նախաձեռնությամբ, գրատպությանը զուգընթաց, Շուշիում կազմակերպվում է նաև գրավաճառության գործը: Արցախի թեմում, Նուխիում, Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, իսկ հետագայում հայաշատ այլ կենտրոններում շրջիկ գրավաճառների փոխարեն երևան են գալիս գրավաճառանոցներ, ձևավորվում ու զարգանում է գրադարանային գործը, տպագրվում ու տարածվում են հատուկ գրացուցակներ: Գրավաճառության գործընթացի ընդլայնմանը ընդառաջում են նաև Պ. Պոռշյանը, սկն. Մարիամ Հախումյանը, Բարսեղ Տեր-Մովսիսյանը, հետագայում՝ Սարգիս արքեպ. Ջալալյանը, Խորեն Ստեփանեն և ուրիշներ, որոնք կապեր են հաստատում Ռուսաստանում, հայկական գաղթօջախներում բնակվող հայության հետ, նպաստում հայ գրքի տարածմանը:

Պետք է նշել, որ Պ. Շանշյանի բարենորոգչական գործունեությունը ամենևին էլ հարթ չի ընթացել. նրա գաղափարական հակարակորդները ամեն կերպ փորձել են խանգարել մեծ մանկավարժի գիտամանկավարժական գործունեությունը<sup>29</sup>: Այնպես, Մատթևոս կաթողիկոսի Կոնդակում նշվում է. «Մարիամյան դպրոցի բացման տոնախմբությունները դեռ չէին մոռացվել, երբ կաթողիկոսը առաջարկեց Ստեփանոս արքեպիսկոպոսին հեռացնել Պետրոս Շանշյանին տեսչությունից: Իր այդ անակնկալ կարգադրությունը ամենայն հայոց կաթողիկոսը պատճառաբանում էր նրանով, որ ժողովրդից բողոքներ են լսվում»<sup>30</sup>:

Հայ մեծ մանկավարժի կյանքի վերջին տարիներին ծավալած մանկավարժական-հրատարակչական գործունեության վերաբերյալ պատմական փաստեր քիչ են պահպանվել: Պ. Շանշյանը մահացել է 1889թ. մարտի 9-ին, Թիֆլիսում<sup>31</sup>:

Այսպիսով, Պ. Շանշյանի գաղափարական հակառակորդների անընդհատ հետապնդումների հետևանքով, նրա հրատարակչական գործունեությունը կյանքի կարճ պատմություն ունեցավ: Այդուամենայնիվ, Շանշյանի բարենորոգչական կարճատև գործունեությունը ձեռք էր բերել բավականաչափ հարուստ իրադարձությունների նկարագրություն: Նրա գործունեությունը բարձր են գնահատել Ներսիսյան դպրոցի ներկայացուցիչներ՝ Պ. Եվանգուլյանցը, Պ. Մարկոս Աղաբեգեանը<sup>32</sup>, ինչպես նաև գիտության ներկայացուցիչներ Մ. Նալբանդյանը<sup>33</sup>, Լեոն<sup>34</sup>, նույնիսկ՝ նրա գաղափարական հակարակորդները<sup>35</sup>:

<sup>29</sup> Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանին վերագրվող մի հոդվածի մասին, ԳԱԱ. տեղեկագիր, 1954, ք. 11 (79):

<sup>30</sup> Կոնդակ 9 մայիսի 1864:

<sup>31</sup> Մեքսիսեդեկ եպս. Մուրատեան, նշվ. աշխ., էջ 96:

<sup>32</sup> «Հայրենիք», 1892, հունիս 16:

<sup>33</sup> Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Եր., 1981:

<sup>34</sup> Լեո, նշվ., աշխ., էջ 282-284:

<sup>35</sup> «Նամակ Տ. Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց գրեալ առ յարգոյ աղգային ոմն ի Կ. Պոլիս», Կ. Պոլիս, 1867:

## Резюме

## Реформаторская деятельность Петроса Шаншьяна

М. Арутюнян

Петрос Шаншьян был одним из преданных сыновей своего народа, известный своими научными достижениями, редакционно-издательской и научно - педагогической активной деятельностью. Он занимает свое особое место в ряду наших выдающихся деятелей. Он внес большой педагогический вклад в школу Тифлиса и епархиальное училище Шуши. Армянский великий педагог благодаря своим ярким взглядам, глубоким знаниям способствовал развитию учебного процесса.

Петрос Шаншьян высоко ценил женское образование, и он принимал активное участие в процессе создания женских школ. Наиболее известной является Мариинская школа в Шуши.

Деятель культуры также активно участвовал в развитии издательской деятельности. Благодаря усилиям П. Шаншьяна и его команды, за короткое время книгоиздание и продажи книг продвинулись в Шуши.

## Summary

## The Reformation Activity of Petros Shanshyan

M. Harutyunyan

Thus, Petros Shanshyan was one of the dedicated sons of people, who is famous not only for his scientific achievements, editorial-publishing, scientific - pedagogical vigorous activity, but also for rich human and civil description and has his special place among our prominent figures. He had especially a great pedagogical contribution in school of Tiflis and diocesan school of Shushi. Armenian great pedagogue due to his bright views and deep knowledge of educational process greatly contributed to the development of the educational process.

Petros Shanshyan valued greatly women's education and actively participated in the process of building female schools. The most noteworthy is the building of Mariamian's school of Shushi.

The cultural activist also carried out wide publishing activity. Due to the efforts of Petros Shanshyan and his team, the printing and book selling progressed in Shushi within a short time.